

ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ — ՍԵՒՐ (ՓԱՐԻՋ)

Յուշիս 9 ին ալ Մուրատեան վարժարանն ունեցու էր տարեվերջի հանդէսը հայ համայնքին ցնծութեան, և ոգեւորութեան մէջ աշակերտներուն՝ որոնք իրենց սիրելիներու ներկայութեան գոհունակութիւնը պիտի ունենային ցուցադրելու իրենց ամբողջ տարւոյ մը աշխատանքին առատ հունձքը: Ժամը 4 ին թատերադահլիճ արդէն խոնուած էր հայ և օտար հրաւիրեալներու բազմութեամբ՝ երբ հին մուտք գործեց հանդիսապէս՝ Ծովակալ Մորնէ, Սէն և Ուազի փոխ-նահանգապետը, Ծով Նախարարութեան գրասենեակի պետը Ժ. Բիբոյ՝ Սիւրբոյ նախկին Մարզպան և նախկին Գետապետ, Զաւէն Ս., Խաւիլոյ և Ռուսմանիոյ հիւպատոսները, Նանսէնեան Գրասենեակին բարտուղարը, Գերպ. Կրաֆէն, Հ. Փուստըսար, Գարակէօզեան Հովի տեսուչը խումբ մը սաներով և այլն, և այլն:

«Մարտէյէզ»էն և «Քամ փորոտան»էն վերջ Հազ. Զ. Խանդատեան բարի գալուստ մաղթեց հիւրերուն՝ յարգանքի և երախտագիտութեան խօսքեր ուղղելով Ֆրանսական պետութեան՝ վարժարանիս և ամբողջ հայ գաղութին հանդէպ ցոյց տուած հոգածութեան: Պրն. Ժ. Բիբոյ մոգէջ հոգեբանութեամբ ուրուագծեց իր առաքելութիւնն ի Սիւրբա 1918ին, ներբողելով հայ ցեղին հոգեբանութիւնը թշուառութեան մէջ արի և յաղթող: Ապա կսկիծի շեշտով անարիւրեղով քաղաքականութեան մուծ դաւերուն՝ որ մեր արիւննոս դասն ուրացան՝ ան զգածուած յայտարարեց. «Թէ «Մենք անոնցմէ ենք որ երբեք չեն մոռնար Հայկական Գառը, և այդ՝ Ֆրանսայի հաւմար սրբազան հարց մ'է: Յիշեցէք լեհաստանը, զայն ալ բաժնեցին, մաս մաս բրին զանազան ազգեր ու մենք տեսանք անոր յարութիւնը և թէ ինչպէս զարհուրելի անարդարութիւն մը վերացուեցաւ աշխարհէս: Ուրեմն պարոններ, թող միանգամ ցմիշտ այս օրինակը կենդանի մնայ, և մենք չքեղ բառերով չէ որ զայն կ'ուզենք կրկնել, զիտենք թէ բառերն յաճախ որքան զուրկ են իմաստէ, մենք ուզեցինք աւելին ընել, խնդրեցինք կառավարութենէն որ ձեռք կարկառէր օգնելու մեզի, որպէս զի այստեղ Փարիզի մէջ հաստատուէր ՀԱՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՂՐՈՒՆ մը որ պիտի ըլլար կենդանի կորիզ մը, գործնական իրականացում մը հայութեան և որուն պիտի կապուէին աշխարհիս բոլոր հայերը: Աշխատանքի նախարարը մեզ ուղղած նամակի մը մէջ խորին համաւորանք կը յայտնէ ու կը խոստանայ իր աջակցութիւնը: Առեւտրական սենեակի նախագահն ալ մեզ ապահովցուց թէ սիրով պիտի ընդունի մեզ Առեւտրական սենեակի պաշտօնարանին մէջ թէ մեր նիստերը գումարելու և թէ մեր հանդիսաւոր բացումը կատարելու: Պ. Պոնէ, Առեւտրական գատարանի նախագահը մեծ հաճոյքով ուզեց Հայ տնտեսական կեդրոնին հիմնադրի անունը կրել, քիչ ժամանակէն այս կորիզը, այս խմբաւորումը կեանք պիտի առնէ, և մօտերս նիստի մը մէջ ՀԱՅ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՂՐՈՒՆ վերջնական հիմերը պիտի նետենք: Աշխարհիս բոլոր հայերն սակէ վերջ թող գիտնան թէ Փարիզի մէջ պաշտօնական կեդրոն մը կայ ուր կրնան իրմէլ գործի հաւմար, ստանալով զիրութիւններ գործառնութեան, և ուր ստուգիւ հայկական երակը պիտի գարնէ: Այսպէս, պարոններ, գաղափարը գործնական գետնի վրայ կը դրուի: Կը խորհիմ թէ դուք ամենքդ պիտի ուզէք սիրով ձեր գործակցութիւնը բերել որպէս զի զայն աւելի ընդհանրական, աւելի լայն և տարածուն ընէք իբրեւ հայրենասիրական և ազգային գործ մը, սակէ վերջ զգալու և ապրելու համար հոս ինչպէս կը փափաքէիք ուրիշ հողի վրայ հիմնել...»: Մինչ խելայեղ ծափերը կը տեղային, Ժ. Բիբոյ, որ Ծովային Նախարար Պ. Ժ. Լէյլը փոխանակած էր անոր անակնկալ հրահանգութեան պատճառաւ, հարգողեց Նախարարին և ախիտով սիրով զգացումները հայ ազգին և մանաւանդ վարժարանին հանդէպ՝ որ իր գուրգուրանքին առարկան է:

Խօսք առաւ նաեւ Գերպ. Կրաֆէն, և գրուածեց փառքերը մեր ցեղին՝ որուն բեկորներուն հանդէպ այնքան մարդասիրութիւն էր ցոյց տուած:

Ծափերու տարափէն վերջ՝ հանդարտ կը բարձրանար ջուծակներու թրթուումով Ա. Տէր Ղեւոնդեանի «Վոդբայ Եայլին», ուր թաւեղեղի մեներգը վերաւոր սոխակի մը քնարերգին պէս յանկուցեց էր, այնքան վճիռ իր պարզութեան մէջ: Յաջորդեցին Սպենդիարեանի «Երեւանի Էթիւաներ»ը, պատկերացնելով մեզի արեւոտ Հայաստանը՝ իր խորհրդապաշտ Ժողովրդեան հաւաքատ գշտներով: Այդ գոյգ վարպետներէն վերջ լոկեցինք տաղանդաւոր երգահան Գ. Ալէմշահի «Արեւելեան երանգներ»նոր հեղինակութիւնը. հոն խոհապէս կը շողշողայ արաբական ցեղախումբ մը տօնական ցնծութեան մէջ և հոյակապ երաժշտութիւնը կը բանայ բազմադուռեան տեսարանը: Եւ այնուհետեւ ներդաշնակ համերգը, անոր յանկարծակի քարացումը՝ անգլիական եղջիւրին որնայայն թովջանքէն՝ որ ովասիսի խորէն կը կարկաչէ: Հուսկ, հեքեթային տեսարանները կը ցնդին տեղի տալով անապատին՝ իր աշուտութեան մէջ մտածկոտ: Ալէմշահ արգարեւ հարուստ է զգացումով ու ներշնչումով, որոնց վրայ կ'աւելցնէ իր արուեստը այնքան մոգէջ, իրաւունք տալով Courrier Musical ի զինք կոչելու «Հայոց խրեմբի Քորչաբովը»:

Աշակերտներու կողմէն արտասանուած քանի մը գեղեցիկ կատրոններ վերջ հայ., Ֆրանս., Իտալ. և անգլ. լեզուներով, բեմ էլու վարժարանին տեսուչը՝ Հ. Սահակ Վ. Տէր Մովսէսեան, որ շատ գեղեցիկ բաներ ըսաւ ազգապաշտօնումի մասին, և գպրոցի գերազանց դերին՝ գաղութներուն մէջ. շեշտեց ծնողներու պարտականութիւնը իրենց զաւակներուն հանդէպ, թէ ինչպէս միջնորդներ չեն որ սղու մը իրական ժառանգութիւնը կը կազմեն, այլ կը թուած սիրտ մը և զարգացած միտք մը: — Վարժարանին անխնայ ուսումնապետը տեղեկատուութիւնն ըրաւ ու

սուսմական տարեշրջանին. 60 է, ըսաւ, աշակերտներու թիւը, որոնց 53 ը գիշերօթիկ. բաժնուած հինգ դասարաններու: Խօսելով ուսուցիչներու մասին՝ 22 են ըսաւ, հայ, Ֆրանսացի, անգլիացի և իտալացի, ընտրուած Փարիզի պետական լաւագոյն ուսուցիչներէն: Յետոյ հրատարակեց մէն մի դասարանի առաջին հանդիսացող սաները՝ Ն. Մեսրոպեան Բ. դասարանէն, Լ. Զատիկեան Գ. դաս. էն, վարժարանին փոքրիկ աստղը Ժ. Տէր-Թովմասեան Գ. դաս. էն, Ս. Տաւադեան Ե. դաս. էն, Հ. Սարկաւազեան Զ. դաս. էն: Հասարակաց շնորհակալութիւն յայտնեց Ֆրանս., Իտալ. Անգլ. պետութիւններուն, Նախարար Լէյլին, ողբ. երեսփ. Հանրի Լորէնի ընտանիքին, Հ. Բ. Լ. Միւլութեան, Մ. Ռ. Ն. Ա. Միւլութեան, Պր. Զ. Խանդատեանին, ողբ. բանաստեղծ Որբերեանի ընտանիքին, Պր. Հրանտ-Սամուէլին ևն. որոնք թանկագին մրցանակներով քաջալերած էին մեր սաները: — Աշակերտներու երգչախումբը չորս լեզուներով յաջող կատրոններ երգեց կամիտասէն, Վերտիէն, Վ. Տեմախէն:

Ծովակալ Մորնէ, օրուան ճառախօսը, շուրջ ժամ մը մոգեց ունկնդիրները, մեր փառքերէն յետոյ յիշելով մեծ աղէտին մէջ մեր կրածները. պատակց յուզիչ գրութիւնը ձէպէլ-Մուսայի սաշարուածներուն՝ որոնց ազատարարն էր եղած, ու կնքեց Ա. Տոմէի նշանակալից խօսքով. «Գերի ազգերը երբ իրենց լեզուն կը սաշեն՝ իրենց բանախ բանալիները ձեռքերնուն մէջ քով. «Գերի ազգերը երբ իրենց լեզուն կը սաշեն՝ իրենց բանախ բանալիները ձեռքերնուն մէջ ունին»: Ուսկից վերջ, լուսաշողշող թատերաբեմէն՝ հայկ. տարազներու շուրջով՝ «Վիլիկիա» երգուեցին: Ուսկից վերջ, լուսաշողշող թատերաբեմէն՝ հայկ. տարազներու շուրջով՝ «Վիլիկիա» երգուեցին: Սուրբ Մարիամի վրով գնաց» և «Հոյ Նար»՝ Գ. Ալէմշահէն դաշնաւորուած, բուռն ճախումբը երգեց «Մարիամի վրով գնաց» և «Հոյ Նար»՝ Գ. Ալէմշահէն դաշնաւորուած, բուռն ճախումբը խլելով մանաւանդ օտարներէն՝ որոնք գիտեն անկաշահագ գնահատել: Ծափեր խլելով մանաւանդ օտարներէն՝ որոնք գիտեն անկաշահագ գնահատել:

Ու այսպէս կը վերջանար հանդէսը տողորելով սաներուն սրտին մէջ սէրը գեղեցիկ և բարւոյն, և օտարներուն մէջ՝ յարգանքը մեր ցեղին:

ՍԿՐՏԻՉ ՊԵՇԻՔԹԱՇԼԵԱՆԻ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ
ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐժԱՐԱՆԻՆ ՄԷՋ - ՍԵՒՐ

Այն օրէն երբ Մուրատեան վարժարանը կը վերաբացուէր Սէնի ափերուն վրայ, Մուրատ — Ռափայէլեան Նախկին աշակերտաց ցիրուցան միութիւնը Փարիզի մէջ՝ զայն որպէս իր սիրական բոյնը կ'ընտրէր վերապրելու համար նախկին երջանիկ օրեր՝ եղբայրութեան զրօշին տակ, զոր տուած էին Միլիթարեան Հայրերը և որուն սրտառուց և հոգեգմայլ արձագանգն էր հնչած Միլիթար Պէշիքթաշլեան Վոսիփորի ափերուն վրայ՝ շուրջ 90 տարիներ առաջ:

Միլիթարեան Հայրեր, Մուրատեան վերածին յարկ... կը մնար Պէշիքթաշլեանի որպէս յայտարար անոր ազգանուէր գործունէութեան և իրմէ ստեղծուած կը թակահարէին՝ մեր Հայրերն և Մ. Ռ. Ն. Աշակերտաց Միութիւնը անցեալ տարի կանգնեցին բեմական կոթող մը Պէշիքթաշլեանի յիշատակին. և հուսկ նուիրական օր մը և հանդէս մը անոր ծննդեան հարիւրամեակին՝ այս տարի, Յունիս 25ին:

«Եղբայր եմք մեք»ի սրբազան կոչը անթիւ բազմութիւն մը հրաւիրած էր Մուրատեան վարժարան՝ Պէշիքթաշլեան թատերասրահի մէջ՝ փարիզահայ գաղութէն

մեծ ու պղտիկ, մտաւորական ու աշխատուոր անխտիր:

Հանդէսը բացաւ Մ. Ռ. Ն. Աշակերտաց Միութեան նախագահը՝ Պրն. Մինապեան՝ պարզելով նախ օրուան հանդէսին նպատակը, մատնանշելով Պէշիքթաշլեանի գմայլելի տիպարն և ազգանուէր գաղափարները՝ որուն ծնունդը պէտք է համարել Հ. Բ. Լ. Միւլութիւնը: Եւ այսպէս պահ մը երեւցաւ նաեւ այդ Միութեան հիմնադիր ազգային անզուգական բարերար Պոստալար փառայի հոգեւոյս յիշատակը. և հասարակութիւնը երկու մեծ դէմքերուն մէջ յարգեց հայ եղբայրութեան և օգնութեան մեծ առաքեալները: Ապա ծափերու մէջ բեմ էլաւ օրուան պաշտօնական բանախօսը՝ Պրն. Ա. Զօպանեան, որ ժամէ մ'աւելի հմայեց իր ունկնդիրները, խօսելով հմտօրէն և ցայտուն գծերու մէջ պարզելով բովանդակ հմայքն և անկեղծ գեղեցկութիւնը Պէշիքթաշլեանի հոգւոյն, իր վաստակաւորի կեանքին և զրական հոգեշունչ նմոյշներով:

Խօսք առաւ յետոյ նաեւ Մուրատեան վարժարանի յարգելի տեսուչը՝ Հ. Սահակ Վ. Տէր Մովսէսեան, որ մեծապէս գնահատեալ

տելով Պէշիքթաշլեանի անուան նուիրուած դրուատիքներն եւ խանդավառ ցոյցերը, ըսաւ թէ ատոնք միեւնոյն միջոց կ'ուղղուին Մխիթարեան Միարանութեանս և կը փառաբանուին անոր մնուցած և աւանդած Միութեան և Եղբայրութեան այն սրբազան սկզբունքները որոնց գերազանց խտացնող և թարգման կը ներկայանայ Պէշիքթաշլեան՝ պարծանք ունի այդ Մըխիթարեան Ուխտին: Յարգելի վարդապետը իր ծանօթ հոետորական շեշտով և հայաշունչ հոգևով յորդորեց և պարտաւորեց հայ երիտասարդութիւնը գործելու անվեհեր և անվհատ Պէշիքթաշլեանի հոգևով և անոր օրինակին համեմատ, իրագործելու համար համերաշխութեան եւ եղբայրութեան անզուգական բարիքը՝ որ ապագայ մը պիտի երաշխաւորէ:

Պրն. Զօպանեանի տուած նմոյշներէն զատ Պէշիքթաշլեանի անմահ քնարէն տողեր լսեցուցին հանդիսականներուն՝ վարժարանի աշակերտներէն՝ Կլորիկեան «Մահ քաջորդուն» և Տէր Թովմասեան՝ «Թաղունք քաջորդուն»: Ինչպէս աշակերտութեան խումբը երգեց «Բամ փորոտան»ը և օրուան յիշատակը նուիրագործող «Եղ-

բայր եմք մեք»ը: Օր. Առաքելեան ալ Օր. Փափազեանի ընկերակցութեամբ երգեց Պէշիքթաշլեանի «Ո՛հ ինչ անուշ»ը շնորհալի և զգայուն ձայնով:

Յարգելի տեսուչը հանդէսի վերջին պահուն անգամ մըն ալ բեմէն լսեցուց իր խանդավառ ձայնը՝ կտակի մը սրբազնութեամբ առաջարկելով հայ հանրութեան ասկից վերջ ազգային ամէն հաւաքոյթի բացման երգն ընել Պէշիքթաշլեանի հոգեշունչ «Եղբայր եմք մեք»ը, որպէս զի միշտ զգանք մեր ցեղական եղբայրութիւնը և այդ համերաշխ և եղբայրական միութեան մէջ գտնենք մեր ընտանեկան և ազգային բարօրութիւնը:

Հ. Սահակ Վ. ի խօսքերուն վրայ աշակերտութիւնն էլեքտրականացած՝ խանդավառօրէն անգամ մ'ալ երգեց Եղբայրութեան անոյշ երգը որպէս կնիք հանդէսի մը որ Մխիթարեան և Մուրատ Ռափայէլեան ընտանիքէն աւելի՝ համազգային կերպարանք էր առած, հանդէպ Պէշիքթաշլեանի անմահ անուան, որ իսկապէս ամբողջ հայութեանն է իր հոգևով, իր գաղափարով, իր գործունէութեամբ և իր անմուռնալի կտակովը համերաշխութեան:

ԱՍՆԱՍՏՅՍ

Ամենամեծ հաճոյքով կը ծանուցանենք թէ Վենետիկոյ արքայական «Ateneo» կահաւոր, շարունակելով իր դարաւոր աւանդութիւնը, Մայիսի վերջին նիստին մէջ, որբացեալ Հ. Արսէն Վրդ. Ղազիկեանէ վերջ՝ իրեն գործօն կահաւորող անուանեց Վ. Հ. ԳԱԲՐԻԷԼ ՎՐԴ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ, Ուխտիս Ընդհ. Աթոռակալը:

այսպէս իր բարձր համարումն յայտնելով Հայ ազգին գիտական ներկայացուցիչ մարմնին Եւրոպայի մէջ:

Յունիսի վերջերը, Քաննապոլսուական յատուկ կոնգրակով, ըստ վաղեմի սովորութեան, Հռոմի հայ կղերիկ ձեռնադրիչ Եպիսկոպոս անուանուեցաւ Արքիապատիւ եւ Գերպ: Տէր ՍԱՐԳԻՍ ՎՐԴ. Տէր ԱԲՐԱՀԱՄԵԱՆ, Կողիւտնի ախաղասաւոր:

Եպիսկոպոսական ձեռնադրութիւնը կատարեց շքեղ հանդիսով Գերերջանիկ Հոգևոր Տէր Աւետիս Արքեպրեան Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ՝ Լեւոնեան հայ կղերանոցի տահարին մէջ, ի ներկայութեան արեւելեան եւ արեւմտեան ճէսերու բարձաստիճան խումբն բազմութեան:

Երկուքին ալ մեր սրտագին եւ ջերմ մաղթանքները:

ՊՄՐ.



Շ Ն Ո Ր Շ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ե Ա Մ Բ Ա Տ Ա Ց Ա Ծ Ե Ն Ք

ԳՈՒՐԵԱՆ ՊԵՏՐՈՍ. — Տաղր. կազմ. և խմբ. Ալագան և Կորենց. Պետհրատ. Երևան, 1932. էջ 90, գինը՝ 3 ռ. 50 կ.

ԱԼԱԶԱՆ և ՆՈՐԵՆՅ (կազմեցին) Տասներորդ տարի - Խորհրդ. Հայաստանի խրոնիկան. Պետհրատ. Երևան, 1933. էջ 198. գինը՝ 1 ռ. 50 կ.

ՇԱՀՈՒՄԵԱՆ ՍՏԵՓԱՆ. — Ընտիր երկերի ժողովածու. հրատ. «Պրոլետար» օրաթերթի. Թիֆլիս, 1931. էջ 178, գինը՝ 1 ռ. 20 կ.

ՎԵՍՊԵՐ. — Կենդանի և կրակի մարտիկացի ձեռնարկ (պատմութիւններ). Թիֆլիս, 1931. էջ 112, գինը՝ 75 կ.

ԿԱՐՄԵՆ (Կարապետեան Արմենակ). — Բաւաւաւեղծութիւններ. Ազրբեջ. Պրոլետար. Աստղաղի. Հյւ. սեկց. Թիֆլիս, 1930. էջ 59, գինը՝ 40 կ.

ԵՐԶՆԿԵԱՆ Ա. — Սեւանի պարտէզներ. Երևան, 1932. էջ 19 (երկու քարտէսներով), գինը՝ 20 կ.

ԳՈՒՐԳԷՆ ՅՈՎԷԱՆ. — Աւաջիկ ժողովրդ. (արձակ բանաստեղծութիւններ և պատկերներ). ԽՍՀՄ ժողովուրդ. կենտր. հրատ. Մոսկուա, 1931. էջ 63, գինը՝ 50 կ.

ՄԵԼԻՔԵԱՆ ՅՈՎԻԿ. — Ճակատում. (պատմութիւններ). ՀՍԽՖՍՀ ժող. կենտր. հրատ. Մոսկուա, 1931. էջ 71, գինը՝ 30 կ.

ՄԱՆՈՒԷԼԵԱՆ ՄԻՔԱՅԷԼ. — Աշուն ձմեռ. (ժողովածու պատմութիւններ). Պետհրատ. Երևան, 1931. էջ 160, գինը՝ 75 կ.

ՄԵՍԵԱՆ ԳԷՈՐԳ. — Պատմութիւններ. Սախելզամի (Թիֆլիս), 1931. էջ 112, գինը՝ 1 ռ. 25 կ.

ՀՐԱԶԵԱՆ ԽԱՉԻԿ. — Միակերպ շիրիկան. (Շարք երիտ. Գրողներ. թիւ 1). Պետհրատ. Երևան, 1931. գինը՝ 15 կ.

ՊՕՂՈՍԵԱՆ ՀՈՒՓՈՒՄԷՆ. — Մերեւաների երրորդ. (պատկերագրեր). Գրգր. «Կարմիր ծիւղեր»-ի, թիւ 5. Վրսա. Պետհրատ. Թիֆլիս, 1932. էջ 45, գինը՝ 60 կ.

— Բանաստեղծութիւններ. Վրսա. Պետհրատ. Մոսկուա. Հյւ. սեկց. թիւ 11. Թիֆլիս, 1930. էջ 32, գինը՝ 15 կ.

ՊԱՅԱԶԱՆ. — Հոգեւոր. Վրսա. Պրոլետար. Աստղ. Հյւ. սեկց. Թիֆլիս, 1929. էջ 32, գինը՝ 15 կ.

ՄԱՐՏԻՆ. — Պատմութիւններ. Վրսա. Պրոլետար. Աստղ. Հյւ. սեկց. թիւ 4. Թիֆլիս, 1929. էջ 32, գինը՝ 15 կ.

ԽԱԼԱԹ ԳԷՈՐԳ. — Կողիկալիք (պոէմ). Վր. Պրոլետար. Աստղ. Հյւ. սեկց. թիւ 9. Թիֆլիս, 1929. էջ 32, գինը՝ 15 կ.

ԱՄԻՐ ԲԱՏՈՒՈՐ — Աշխարհը շուտ եկաւ. Վր. Պրոլետար. Աստղ. Հյւ. սեկց. թիւ 8. Թիֆլիս, 1929. էջ 32, գինը՝ 15 կ.

ԳԱՐԵՆԵԱՆ Մ. — Ոսկի թղեր. «Կարմիր ծիւղեր»-ի գրգր. թիւ 3. Սախելզամի (Թիֆլիս), 1932. էջ 52, գինը՝ 60 կ.

— «Նորը». Վր. Պրոլետար. Աստղ. Հյւ. սեկց. թիւ 6. Թիֆլիս, 1929. էջ 32, գինը՝ 25 կ.

— Կողիկալիք. Սախելզամի (Թիֆլիս), 1931. էջ 102, գինը՝ 70 կ.

ԽՆԿՈՒՊԵՐ. — Պիտեր Հրաչ. (պատկերագրեր). Պետհրատ. Երևան, 1930. գինը՝ 40 կ.

ՊԵՏՐՈՍԵԱՆ ՄԱՐԿԱԹ. — Պիտերը Հեղաւաւան. (պատկերագրեր). «Կարմիր ծիւղեր»-ի Գրգր. գեղ. սերիա. թիւ 1. Սախելզամի (Թիֆլիս), 1932. էջ 48, գինը՝ 70 կ.

ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ Յ. — Մեղուների կոմունիստ. (պատկերագրեր). Պետհրատ. Երևան, 1931. գինը՝ 35 կ.

ԶԱԽԻՐԵԱՆ Ս. — Ճագարը. (պատկերագրեր). Պետհրատ. Երևան, 1933. գինը՝ 60 կ.

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԶԱՎԷՆ. — Պիտեր և Յաղրաւակ. (բնօտարգ). Պրոլետար. բանուոր հարուստ ծայրները. թիւ 7 Պետհրատ. Երևան, 1932. էջ 24, գինը՝ 1 ռ.

ՎԱՐԳԱՆԵԱՆ ԱՂԱՍԻ. — Ալաւ-Կոյուն. (պոէմ). Բ. հրատ. Վ. Ս. Խ. Հ. Պետհրատ. Թիֆլիս, 1927. էջ 64, գինը՝ 60 կ.

— (խմբ. Երգեր Խորհրդային. «Պրոլետար»-ի գեղարքայ - քաղ - մաս. գրգր. Թիֆլիս, 1930. էջ 64. (ձրի յաւելուած «Պրոլետար»-ի):

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ. (խմբ. Գրական - Գեղարքայական ժողովածու. հր. Թիֆլիսի Հայարտան, Թիֆլիս, 1927. էջ 142, գինը՝ 1 ռ. 50 կ.

ՍԻՄՈՆԵԱՆ Գ. և ՄՈՎՍԷՍԵԱՆ Ա. (խմբ. Զարգործարանային եօրեւանակների ծրագր. 1 Պրակ. 1 Ֆիզիկա. 2 Աստղաբաշխութիւն. 3 Քիմիա. Պետհրատ. ՀՍԽՖՍՀ (Լուստղիկա մաս-Ուսումնա-Մեթոդական Սեկտոր), Երևան, 1932. էջ 94, գինը՝ 75 կ.

ՍԵՂԱԼ ԵԼԵՆԱ. — Ճանապարհը ցեղի կշիռ. յրատ. թարգմ. Վ. Տէր - Առաքելեան. Պետհրատ. Երևան, 1931. էջ 252, գինը՝ 3 ռ. 50 կ.

ՆԻԿԻՖՈՐՈՎ ԳԵՕՐԳԻ. — Լապտերի մօտ. (պոէմ). թրգմ. Արագի. Պետհրատ. 1931. էջ 304, գինը՝ 2 ռ. 50 կ.

ԶԵԽՈՎ ԱՆՏՈՆ. — Կաշտակա. (պատմութիւն). ԽՍՀ Միութ. ժող. կենտր. հր. Մոսկուա, 1929. էջ 48, գինը՝ 40 կ.

(Շարք տես յայտրդ երեսը)